

ՀՆՁԱԿ

ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ՕՐԳԱՆ ՀՆՁԱԿԵԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ

ՅԵՂԱՓՈԽԱԿԱՆ ԳԱՂԱՓԱՐԸ.

Հայկական յեղափոխական գաղափարի թըշնամիները — ամեն մորթի և ամեն գոյնի — զըրգառութեան ու հրձաւորի մէջ են: Մեր խօսքը հայ թշնամիների մասին է: Նրանց թուում է, թէ իրանց ոսկէ դարը հասել է, երբ կարող են յաղեցում տալ իրանց անձնական քէնին ու ուխին, իրանց նախնանքին ու թշնամանքին, որոնք երկար ժամանակ երկիւղեց թաղցնում էին իրանց մէջ: Եւ ինչու չէ. չէ որ տխմարները, չարամիտներն ու թշնամիները փող են փչում հայ յեղափոխական գաղափարի թաղման և զարմանալի ծաղրածուական եղանակով ամեն կերպ հուլովում, թէ յեղափոխութիւնը վատ բան է, թէ յեղափոխութիւնը հայերի տունը քանդեց, թէ յեղափոխութիւնը հայերի համար չէ, և այլն: Նրանք իրանց երջանիկ են զգում, որ վերջապէս կարող են փորձ անել այժմ իրանց Ֆրազաբանութեան կոտորած ամանները ծախելու և իրանց բարոյականի կեղտոտ լաթերը լալու ուրիշ ջերերում: Ստորաքարշներն ազգային ներկայ եղբրական վիճակը յարմար ըստէ են համարում իրանց նենգաւոր խաբեբայութիւններն ու շահախնդրութիւնները գործադրելու անպատիժ կերպով: Ենպատիժ: Ո՛չ միայն այդ, այլ նաև ձգտում են ազգային առաջնորդների տեղ անցնել, և իրանց ներկայացնել մարդարէներ: Օ, վաղուց նրանք զիտէին ամեն բան, ամեն բան: Նրանք զիտէին, որ եւրօպական տէրութիւնները հայերին չեն օգնիլ, մինչդեռ հէնց իրանք էին, որ շարունակ հայերին խրատում էին այդ տէրութիւնների հոտած բակերից սպասել փրկութիւն: Նրանք զիտէին, որ հայկական յեղափոխութիւնը խենթերի գործ է, մինչդեռ այդ չէր խանգարում, որ յեղափոխական աջողութիւնների միջոցին հէնց իրանք շողորթէին այդ խենթերին: Նրանք զիտէին նոյնպէս, որ յեղափոխական շարժումները սուլթանին այնքան կը գրգռեն, որ կոտորածներ անել կը տայ, մինչդեռ երբ յեղափոխական աջողութիւնների միջոցին նրանց մեղադրում էինք, թէ հակաեղափոխականներ են, էլ Եսուած, երկինք, երկիր, պապ ու հայր չէին

թողնում, որոնց անունով չերդէին, թէ իրանք հակաեղափոխական չեն: Եւ այդ կոմիկները, այդ ծաղրածուները, նոյնքան կեղծաւոր, հիպոկրիտ ու ջէզլիտ, որքան և անգոյն, գռեհիկ ու տգէտ, իրանք իրանց այսօր մարդարէներ են հռչակում: Նրկէսների մասխարաչենքի հետ նախնանքի մրցողներ յայտնւելով, նրանք շարունակ սրտի, մտքի ու բարոյական ամեն տեսակ սալաօժօրտալներ, փոփոխութիւններ, օյնբազութիւններ են անում, որպէս զի պարզամտին հաւատացնեն, թէ հայոց ազգի զլխին կանաչ-կարմիր կապելու միայն իրանք են կոչւած, իրանք են ամեն բան հայերի համար: Եւ զձ ազգ, մեղք ազգ, եթէ այդպիսի ցեցերին իրան արժանի առաջնորդ համարէ: Վարժիք կայ, որ մէկ ազգ ճանաչւում է իր լրագրութեամբ, այսինքն այդ լրագրութիւնը պատկերն է նրա մըտաւոր ու բարոյական յատկութիւնների: Վարժիք կայ նաև, որ մէկ ազգի առաջնորդներն էլ նոյնն են նրա նրա նկատմամբ, ինչ որ և լրագրութիւնը: Եթէ այդ ձիշդ է, այն ժամանակ խեղճ հայ ազգ, որ վերոյիշած մարդարէների պէս անձերը նրա զլխին առաջնորդներ կանգնելու յաւակնութիւնն ունեն...

Սակայն ասացինք, որ վերջին տարին այդ ներքին թշնամիները կատաղել կռիւ են մղում յեղափոխական գաղափարի դէմ: Ազգային դառն հանգամանքները և եւրօպական քաղաքականութեան 'ոճրագործ' եսականութիւնն ըստ երևոյթին ամեն կերպ նուաստում են հայ հասարակութեանը վարակելու այդ հակաեղափոխական թոյնով: Բայց վերջինս թող զգուշանայ այդ թակարդից. երևոյթը խաբուսիկ է, և նրանք, որոնք ձգնում են շահագործել այդ խաբուսիկ երևոյթը, կամ տխմարներ են և կամ ազգի գերեզմանափորեր: Մենք ասել ենք և ասում ենք, որ, այո, վերջին երկու տարւայ ընթացքում պարզորոշաբար երևան եկաւ, որ մի կարգ յեղափոխական կոչւած գործիչներ, որոնք ջանք էին անում ամբողջովին իրանց ձեռքը զցել յեղափոխական ասպարէզը, յայտնւեցան տգէտներ, վատեր, հացկատալներ, թագուն դաւաճաններ ու մատնիչներ անգամ, և դրանց շնորհով յեղափոխական գործը ստացաւ մեծ հարւած: Այդ խառնիճաղանձ ամբօխը,

պոլսական շներով լի հոտած փողոցներից կուտակած այդ աղբը, կոտրեց յեղափոխական անւան վարկը, ապականեց յեղափոխական առաւելքը, պղտորեց, շփոթեց հասարակութեան միտքը, և այդպիսով մեծ փնաս հասցրեց յեղափոխական գործի զարգացման ու աղղեցութեան: Բայց միթէ դրանից կարելի է եզրակացնել, որ յեղափոխական գաղափարը, մարդկային փրկութեան այդ տաճարը, փնասակար է, աղէտալի է կամ նոյն իսկ անօգուտ: Հաւատացեալների աչքին եկեղեցին սրբավայր է, բայց նրանք քաջ գիտեն, որ այդ եկեղեցու ծառայողների ամենամեծ թիւը բախտախնդիր, զոռ, խաբեբայ է, շահագործող ժողովրդի միամիտ աստուածավախութիւնը, ջեզլիտաբար ստրկացնող ժողովրդի անտրտուն՝ ու համակամ զգացումն ու միտքը: Վէ, ուրեմն, հաւատացեալներ, քանի որ Վրիստոսի ծառաներն այդպէս են, զնայէք, կործանեցէք Վրիստոսի տաճարը: Փոխարէն այնտեղից վռնտելու, արտաքսելու այդ ծառաների ստորաքարը ու ջեզլիտ խաժամութիւն, քարկոծեցէք այնտեղ խաչի վրայ գտնւած Վրիստոսի չարատանջ, անձնազոհ ու հեզ պատկերը... Արէք, արէք այդ. չէ որ սրիկաների քարոզն այսօր ձեզ և առհասարակ հասարակութեան վրայ ազդում է և դուք քարկոծում էք յեղափոխական գաղափարը, ջանք էք անում տապալել յեղափոխական տաճարը, մինչդեռ միևնոյն ժամանակ միամիտ խելքով ձեր ջերմ բաբախող սրբոյի վրայ տաքացնում էք այն օձերին, որոնք սպրդել են այդ սուրբ տաճարի մէջ, իրանց ներկայացնելով նրա ծառաներ...

Որ հայութեան վիճակն այսօր կրիտիկական է. որ հայ ազգային դատն այսօր գտնուում է այնպիսի թշնամիների կամքի տակ, ինչպէս սուլթանն է և եւրօպական ինքնասէր տէրութիւններն են. որ հայ յեղափոխական գործն այսօր անցնում է մի մութ, տաքնապալի շրջան, — այդ բոլորը բացաղբուում է այն ներքին ու արտաքին քաղաքական հանգամանքներով ու զէպքերով, որոնք վերջին երկու տարին եկան գրաւեցին ազգային ասպարէզը: Բայց որ հայերս հասած լինենք այն ողորմելի դրութեան, որ ամեն գոյնի ու մորթի ջեզլիտներն ու հացկատակները, դիւանագէտ, մի կարգի յեղափոխական և այլ կոչւածներ, սկսեն, անաչառութեան ու ազդասիրութեան գոյնի տակ, փրփրած բերաններով անընդհատաբար յարձակել յեղափոխական գաղափարի վրայ և նոյնպէս այն անձերի դէմ, որոնք անխախտ սրբութեամբ կրում են այդ գաղափարը — դա, այդ արշաւանքը, մէկ այնպիսի տարօրինակ ու զրգւելի պառադօքս է (յարակարծիք), որ կարող է

բացաղբուել միմիայն մի կերպ: Այն, որ յեղափոխական գաղափարի այդ ջեզլիտ թշնամիներ չափազանց լրբացել են, քանի որ տեսնում են մի հասարակութիւն, որն իր շփոթութեամբ, իր պարզամտութեամբ նրանց առաջ ասպարէզ է բացել ամեն ոտնձգութիւնների համար: Ինքն ըստ ինքեան մի քանի ոտորաքարշների այդ արշաւանքը չափազանց տկար ու աննշանակ է իր թզուկ ոյժով տապալելու յեղափոխական գաղափարի ամրակալմ տաճարը: Մեր աչքին բնաւ կարեւորութիւն չունի, յեղափոխական դատի տեսակէտից, թէ որքան զարշահոտութիւն է գալիս այդ թզուկների նեխած, պառաւական ուղեղից և բանբասաւէր, ապականւած սրտերից և թէ ինչպէս նրանք՝ ձեռք ձեռքի տւած իրանց պէս ազգային վիժւածքների հետ՝ ազգափնաս ոտնձգութիւններ են անում իրանց նողկալի ընթացքով յեղափոխական գաղափարի դէմ: Ո՛չ: Սակայն այդ բոլորի մէջ և բոլորից դուրս կայ մի խնդիր, որ ունի հիմնական նշանակութիւն, որ իշխում է մեր ամբողջ ազգային կեանքի, ազգային բախտի վրայ: Վա ազգային դատն է, և այդ դատը երէկ, ինչպէս և այսօր, այսօր, ինչպէս և վաղը, մինչև իր լուծումը, կարող է աջողութեամբ պսակել միմիայն յեղափոխական գաղափարի ընդարձակ, խեղացի ու անկեղծ իրականացումով: Բայց հայ հասարակութիւնը չարակամներին միամտաբար թող է տալիս մոլորեցնել, խաբել, թունաւորել իրան դէպի այդ գաղափարը, և այնուհետեւ ինքն իրան դցում է վարանման, շփոթութեան, վհատութեան մէջ, մեռնցում է իր մէջ ամեն եռանդ, ամեն յոյս և այդպիսով անդամալուծում իր ոյժերը, որոնք անհրաժեշտ են յեղափոխական կռիւր մղղելու համար, առանց որոնց յեղափոխական գործըն ու իր նպատակը, այն է՝ ազգային դատի բաւարար լուծումը, չեն կարող պսակել աջողութեամբ: Յեղափոխութիւն անողը ժողովուրդն է, ընդհանրութիւնն է, և եթէ նա դառնայ անդամալուծ, այլ ևս ո՞ր մէկից պէտք է սպասէ իր փրկութիւնը: Չարարաող, վատաբարոյ շառլատաններից ու ցեցերից արդեօք, թէ՞ զառանցական նախախնամութիւնից: Եթէ ժողովուրդն ինքը չը մտածէ, չը հոգայ իր վիճակի բարեկաման մասին, եթէ նա, երբէք չընկճւելով, երբէք չը վհատւելով, չը ջանայ միշտ, շարունակ իր ձեռքով սրել այն երկաթը, որով պէտք է հարւածը տայ իր դարեւոր թշնամուն, — այն ժամանակ այլ ևս մի սպասէք փրկութիւն, այն ժամանակ այդպիսի մի ժողովուրդ անարժան է իսկ ունենալու ազատութիւն, քանի որ ինքը չէ այդ ազատութիւնը ձեռք բերողը: Թող ամեն մի հայ, որի սրտին անկեղծօրէն մօտ է հայութեան փրկ-

կուլթիւնը, լաւ մտածէ այդ կէտերի վրայ: Թո՛ղ նա ունենայ ազգային ինքնաճանաչութիւն, ազգային շահի գիտակցութիւն: Թո՛ղ զգուշանայ չը դառնալ թերահաւատ դէպի յեղափոխական գաղափարը, որպէսզի չը գահաւիժէ իրան անդործութեան, վճատութեան և զղելի երկպառակուլութիւնների սոսկալի վեհը, որտեղից դուրս գալն այլ ևս անհնարին կը լինի: Աթէ մի շարք տարիների փայլուն աջողութիւններից յետոյ հայ յեղափոխական ջանքերը եկան ու զարնեցան իրանցից աւելի, շատ աւելի զօրաւոր, աշխարհավար կամքերի դէմ, ինչպէս քաղաքական անբարեկամահայ հանգամանքները և եւրօպական տէրութիւնների հակառակ շահերն ու թշնամանքը — դա չէ ապացուցանում յեղափոխական գաղափարի վնասակարութիւնը, այլ ապացուցանում է մէկ ուրիշ բան: Ա՛յն, որ յեղափոխական գաղափարի ծառայող պէտք է լինի ամբողջ ժողովուրդը՝ իր ընդհանուր կարող ոյժերով, իր ընդհանուր միահամուռ ապստամբութեամբ, որի միջոցով էլ նա կը հասնէ իր նպատակին, ինչպէս Արէստէն: Ամբողջ քսան-քսան և հինգ տարի այդ քաջարի երկիրը չը վճատեց: Ի՞ր մի քանի անգամ մղած ապստամբական կռիւ ծանր անաջողութիւններից յետոյ, նա այս անգամ էլ ապստամբեց և հիմա գտնուում է իր վերջնական ազատման նախընթաց օրը, դա — այդ մի բուռն ժողովուրդը:

ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐ ԿԻԼԻԿԻԱՅԻՑ

28 Սեպտ. 1892.

Սուլթանի կառավարութիւնը նամանաւնդ Յուսստանի վրայ տարած յաղթութիւններէ յետոյ, կարողացած է իր քաղաքական ազդեցութիւնը տարածել միւս ժամանակ թէ Կ. պօլսի, թէ Թիւրքիայի գլխաւոր քաղաքների և թէ հեռաւոր նահանգների մէջ և մահմետական վայրերի տարրին դնել այն դրութեան մէջ և առաջնորդել այն ուղղութեամբ, ինչպէս իր ցանկութիւնն է և ինչպէս որ թոյլ կը տան իր շահերը: Թիւրք հասարակութիւնը զուրկ ամենատարրական գիտակցութենէ՝ դէպի իր կեանքը, դէպի իր բարօրութիւնն ու առաջդիմութիւնը՝ անկարող է մտածել ու է խնդրի մասին: Թիւրք խուժանը կանէ, կը գործադրէ այն, ինչ որ կը թելադրեն իրեն՝ սուլթանի հաւատարիմ պաշտօնեաները և իսլամականութեան առաջնորդ մոլլաներն ու սօֆիաները: Կիլիկիայի մէջ մանաւանդ վերջին դատակարգը՝ որ խիստ մեծ ազդեցութիւն ունի մահմետականների վրայ, լեցւած միայն կոյր տեղութեամբ ու թշնամութեամբ, ամեն անգամ յարմար առիթը ներկայանալուն ոչ մի ջանք չը խնայէր Թիւրք ժողովուրդին գրգռելու հայերիս դէմ:

Այլ ինչին շարժալայ մէջ կառավարութիւնը զգալի կերպով փոխեց իր վերաբերութեան կերպը: Ատոնայի վալիի այցելութեան և պտոյտի ժամանակ իւրաքանչիւր խլամ մի մի բռնաւոր էր հայերի գլխին և ինքը

վալին ևս արգէն կարծարէր անոնց մէջ թշնամութեան ոգին և կը գրգռէր հասարակութիւնը: Մինչդեռ 7 օր առաջ ճէպէլի միւլթասարիֆն ևս այցելութեան ելած լինելով դէպի գաւառները, վալիի ընթացքի բոլորովին հակառակ վերաբերութիւն ցոյց տուաւ: Նա կը խրատէր Թիւրքերին հանգիստ մնալ, հայ գրաքնների հետ լաւ ապրել, այսուհետեւ պէտք է մոռանալ անցեալի դէպքերը. նոյնպէս հայերին կը պատուիրէր հաւատարիմ լինել: Բռնութեան, կեղեքութեան և արհամարանքին յաջորդեցին աւելի մեղմ ընթացք: Միւլթասարիֆը հաւաքելով կղերականներն ու աշաները սկսաւ նորանոր հարցեր անել ժողովրդի վիճակի, անոր թշուառութեան և պատճառների մասին: Նա խոստացաւ — ի հարկէ այն պայմանով, որ նորա խոստումները պիտի մնան միշտ Փրագնէր — բարեկարգութիւն մտցնել, պատժել Թիւրք չարագործներին, հայ ոստիկաններ և պաշտօնեաներ հաստատել, Թիւրքերի կողմէ յափշտակուած հողերն ու պարտեղները յետ վերադարձնել, ժողովրդի տնտեսական վիճակի բարելաւութեան միասին մասնաւոր հոգածութիւն դարձնել, ևն. ևն: Եւ յետոյ չը մոռացաւ ծիծաղելի կերպով աւելացնել, թէ արդէն հայկական նահանգների ամեն կողմեր բարենորոգումները գործադրուած են, ժողովուրդը երջանիկ է և շուտով այստեղ ալ կիրականայ...

Այդպէս օր յետոյ Միւլթասարիֆի մունեակը պաշտօնապէս յայտարարեց շուկաների մէջ, թէ վեհափառ սուլթանի շնորհով ապահովութիւնը կը տիրէ գաւառի մէջ, հայ գիւղացին թող համարձակ գնայ իր հողերը վարելու. սուլթանի հրամանով կարգադրութիւններ սկսած են ևն:

Այլ ինչին օրերս այլ և այլ տարածայնութիւններ կը շրջին Թիւրք հասարակութեան մէջ, թէ իբր սուլթանը կը ջանայ համախաւսականութեան գաղափարը իրականացնել և այդ առթով քարոզչներ կուղարկէ դէպի մահմետական հեռաւոր երկիրները և մասնաւորապէս Հնդկաստան՝ սոյն վերջինս գրգռելու և ապրստամբեցնելու Անգլիական կառավարութեան դէմ: Նաև իբր թէ Թիւրքիան առաջիկայ ձմրան պատերազմ պէտք է ունենայ Ռուսաստանի հետ և որի համար հարկ եղած նախապատրաստութիւնները կը տեսնէ:

ՄԱՍՏԱՌՑԻ.

2. — Մ. 14 Նոյեմբեր 97.

Թիւրքական կառավարութիւնը Կիլիկիայի մէջ բարենորոգութիւններ կը մտցնէ... Մէկ ամիս է, ինչ Պայասի կառավարիչը յայտարարեց, թէ իր վիճակի մէջ 12 հայ ոստիկաններ պէտք է նշանակուեն և ցանկացող հայը թող դիմէ տեղական կառավարութեան: Սակայն մինչև այժմ տակաւին ոչ մի հայ ցանկութիւն չը յայտնեց և չը դիմեց ոտք դնելու Թիւրքական նեխուած չըջանականերու մէջ: Ինչպէս յօժարութիւն ունենալ, երբ ակնհայտ է կը տեսնուի չըջափակի գաւառներու մէջ նշանակուած հայ ոստիկաններու կամ պաշտօնեաներու աննախանձելի վեճակը և տխուր վերջը՝ սպանուած և կամ խեղդամահ եղած: Կիլիկիցի ոչ մի խելքը գլուխը հայ չը ցանկանար խաբուելով կառավարութեան կեղծ խոստումներէն, ընկնէր անոր գիրկը: Մեզ համար պարզ է, որ Թիւրք սուլթաններու իշխանութեան ներքեւ մենք չենք կարող ունե-

նալ ոչ ապահովութիւն, ոչ պատիւ, ոչ հանգիստ և ոչ առաջդիմութիւն: Թիւրքական բռնութիւնը, երբ չը գտներ իր առջև դիմադրող ոյժ, ինքնապաշտպանութիւն, նա անսրգել կը մտնէ թէ մեր քաղաքներն ու գիւղերը, թէ մեր տները և գաղանի անխըղձութեամբ կոչնչացնէ, ինչ որ կը տեսնեն անոր աչքերը: Գեռ երկու օր առաջ Պայասի բերդի մէջ խեղդամահ ըսաւ Ե ազը ճեան Յովհանէս անուն մի երիտասարդ, որը ամբաստանուած էր, մէկ ու կէս տարիէ ի վեր, իբրեւ հայ էշգիայ:

Առաւօլարութիւնը կը յորդորէ հայերուն, որ մեր անշարժ ստացուածքներն գրաւ տանք օսմանեան Պան գային և սոկոսով գրամ ստանալով՝ եզներ գնենք, երկրագործական այլ և այլ անհրաժեշտ պէտքեր հագանք և վերսկսենք հողագործական աշխատութիւնները: Սակայն զգնչի խորամանկութիւններ՝ հայերը կողպտելու և բոլորովին մերկացնելու համար: Նա կը յորդորէ որովհետեւ պէտք է հարկերին երեսուն կաշառք տանք պաշտօնեաներուն, քսան ևս սոկոս, իսկ մնացած գումարը գանձելէ մի քանի օր յետոյ հարկահաւաք պաշտօնեաները խմբովին կը թափուեն մեր տունը և բռնութեամբ կը խլեն մեր ձեռքէն երկրագործութեան յատուկ գրամը: Այս դեռ ոչինչ: Անց ամիս կամ մէկ տարի յետոյ կ'առաւօլարութիւնը այդ պարտքի տեղ կը դրաւ ամբողջ մեր արտերը և ապրուստի միջոցները: Ահա սուլթանի քաղաքականութիւնը դէպի հայերս, անոր խոստացած բարենորոգումները, անոր ծրագիրը կոտորածներէն յետոյ հայ տարրը ոչնչացնելու նպատակով: Շատ սակաւ են բարեբաղդաբար այդպիսի հայեր, որոնք անխոհեմութիւնը կուտեսնան մի քանի տասնեակ ռկի պարտք վերցնել և քիչ ժամանակ վերջ իրենց ամբողջ ստացուածքէն զրկուած լինել:

Իր գահակալութեան տարեդարձի պատճառով սուլթանը, իբր թէ ներում շնորհեց քաղաքական բանտարկեալներուն: Սակայն Ատանայի մէջ ոչ մի հայ բանտէն ազատ չը թողուեցան, այլ ընդհակառակը այս օրեր բանտարկեալներու թիւը աւելի կը բազմապատկուին: Բանտարկեալները աղերսաբեր ուղարկեցին թէ կեդրոնական կառավարութեան և թէ Օրմանեանին, բայց ոչ մի ուշադրութիւն...

Թիւրք կառավարութիւնը ամեն ժամանակ նորանոր մեքենայութիւններ կը ստեղծէ անտեսապէս և նիւթապէս բողբոջելու ուժասպառ անելու հայերս: Իբր թէ երեք տարի հայերէն զինուորական սուրբ չը հաւաքուելու շնորհ էր եղած, բայց այժմ սուլթանի պաշտօնեաները զինուորական սուրբը կրկնապատկելով բարդած են էմլաքի և թիճէրէ թի աուրբերու վրայ, առանց նկատողութեան առնելու, թէ հայերս ոչ թիճէրէթ (վաստակ) ունենք և ոչ ալ մեր հողերու և կալուածներու տէրերն ենք: Իսկ ճէպէլի միւլթէսարիֆութեան և Պախչէի մէջ բռնի կերպով հայերէն կը հաւաքեն նաև զինուորական սուրբը, առարկելով, որ իրենք չեն կոտորուած և ողջ կապրեն...

Վերջին ամսւայ մէջ գաղտնի և մասնաւոր այցելու թիւրք պաշտօնեաներ յաջորդաբար շրջան կը կատարեն Վիլիկիայի զանազան վայրերը: Այդ մասնաւոր պաշտօնեաները ամեն մի քաղաքի, գաւառի և գիւղի մէջ իրենց գաղտնի և թուեաւոր հրահանգներն ու պատուէրները հաղորդելով տեղական կառավարութեանց և թիւրք խուժանին, արդէն գրգռած,

այս վերջիններս աւելի ևս կը բորբոքին թշնամական զգացումով և կը լարին հայերու գէմ: Անոնց գաղտնի հրահանգներն ու պատուիրանքները մեզ համար գաղտնիք չեն: Ամենայնոք տգէտ, յիմար թիւրք քաղաքացին կամ երկրագործը ղրբգործւածանոնց ազդեցութիւններով՝ հրապարակի վրայ կը պոռայ, կը կանչէ, թէ «հայու գլխուն հարուածները պէտք է անպակաս անել, պէտք է ճնշել, որպէսզի նա անկարող լինի մտածել ուրիշ բաների մասին. անոնց աշխատութեան աղիւսները պէտք է իւրացնել, կեղեքել, թալանել, որպէս զի նա միշտ անօթի և կարօտ մնայ»...

Ապառնի և ֆռնուղի անգէն հայ գիւղացիներն և անպաշտպան կիներն ու ծերերը կոտորող արիւնարբու Ալի-բէկը, որը շնորհիւ Զէյթունի դէմ կրած չարաշար պարտութեան փաշայութեան աստիճանին բարձրացաւ, Վիլիկիայի ուրիշ գլխաւոր վայրերը շրջելէ յետոյ հոկ. 8-ին հասաւ այս կողմերը և այլ և այլ հրահանգներ տալէ և զինուորական կարգադրութիւններ անելէ վերջ մեկնեցաւ: Թիւրքերի մէջ եղած տարածայնութեան նայելով իբր թէ Պօլիս է ուղեւորուել: Այդ գաղան պաշտօնեայի աստ գալ և գնալէ յետոյ տեղական կառավարութեան վերաբերութիւնը աւելի որոշ և խիստ երեւոյթ ստացաւ դէպի հայերը: Հարստահարութիւն, թալանում, հալածանք բազմապատկուեցան:

Այս օրեր ամենամեծ խստութեամբ և ստիպողականութեամբ կը պահանջուին սուրբեր: Եւ որովհետեւ ժողովրդի մօտ պատրաստի դրամ գոյութիւն չունի, նա ենթարկուած է ոստիկաններու և ցածորդի պաշտօնեաներու հաճոյանքին, անլուր տանջանքին և օրերով բանտարկութեան:

Վիլիկեցի խլամներու համար իբրեւ խալիֆա և կամ իբրեւ սուրբ իւլէմա նշանակութիւն ունեցող Հաճի Միւլթի Շէյխի նախագահութեամբ, երկու-երեք օրէ իվեր գաղտնի ժողովներ տեղի կունենան: Այս առթիւ զանազան տարածայնութիւններ կան թէ հայերու և թէ թիւրքերու մէջ:

Հոկ. 10-ին բազմութիւն զինուորներով և փօխաններով շրջապատեցին տ. Սահակ քահանայի և Գէշիշեան Գրիգորի տները: Խիստ խուզարկութիւն կատարելէ վերջ, թէ և ոչ մի վնասակար բան չը գտան, բայց դարձեալ սոյն անձերը և վերջինիս տղան բանտարկեցին: Խուզարկութեան պատճառները անորոշ են տակաւին: Մի բանի օր յետոյ վերջինները ազատ թողուեցան, իսկ տ. Սահակը ընդհակառակութեամբ փոխադրեցին Ատանայի բանտը, այնտեղ հարցաքննելու համար:

Այսօր լուրեր կը պտտին թէ Վիլիկիայի ամեն կողմ խստութիւնները ընդարձակեցան և Ատանա, Հաճին, Մէրսին և Ալէքսանդրէտ քաղաքների մէջ բազմութիւն ձերբակալութիւններ տեղի ունեցան:

Ինչպէս պարզ է, մեծ Մարդասպանը և իր պաշիպօզուգ կառավարութիւնը այժմ իր խաբեբայ և վնասակար ուղղութիւնը՝ դէպի հայերը, յարեւորագումներով՝ իսկական դիմակը այլ ևս վայր առած, շրջանով եւրօպական պետութիւններու շահախնդիր և մարդաստոյշ քաղաքականութեան, սկսած են քացարձակ և անվախ կերպով ի գործ դնել երկրի ամեն կողմերը հարստահարութիւն, կեղեքում և բռնութիւն: Սակայն սուլթանական փտած կառավարութեան այդ հրէշային վարմունքը, գողանային խստութիւններն ու

հաշտեցանք, նոյնպէս անոր խաբեբայութիւնները, երբէք չեն կարող վհատեցնել զ... ընդհակառակը այդ ամենը կը զօրացնեն մեր մէջ ինքնավստահութեան և տոկոսութեան գաղափարը, մեզ կը ներշնչեն աւելի եռանդ, ոյժ և յարատեւութիւն մեր գործերի մէջ...

ՄԱՍՏԱՌՈՅԻ.

Պ... 15 Սեպտեմբեր 1897.

Հակառակ կառավարութեան խոստումների երկիրը բարեկարգելու համար և ըրած արտաքին ձեռնարկութիւնների՝ ժողովրդի գրութիւնը միշտ միեւնոյն տխուր պատկերը ունի. թէ հայ և թէ թիւրք ժողովուրդը բոլորովին քայքայուած է տնտեսապէս և թրջ-ւառութիւնը մտած է, առհասարակ, ամենքի դռնէն ներս: Մի քանի օր առաջ յանկարծ մէկ ինչ որ իրարանցում, ազմուկ առաջ եկաւ քաղաքի շուկաները. մի քանի վայրկեանի մէջ խանութները փակուեցան և փողոցները դատարկուեցան բոլորովին: Քաղաքի և շրջակաների պաշտպանութեան համար պատրաստուած զինւորներն էին, որ լեցւած շուկաները կը յափշտակէին, կը թալանէին ինչ որ հարկաւոր էր իրենց: Սուլթանի այս սովալըւկ զաւակները շուկայի մէջ վերջացնելով իրենց տխուր դերը՝ ցրուեցան թաղերը և միայն անօթի չը մեռնելու համար հաց կը խնդրէին: Յայտնի համարձակ կը պոռային այդ թշուառ անօթի զինւորները, թէ «վալլահ, պինպաշներն լիւրալարներ պիլէ չալարը. օտա օլմազ իսէ մարթինիմիզի սաթարը, տէօվէթ պիզի աճ էօլտիւրմէյէ մի կէթիրտի»: (Աստուած վկայ. հազարապետի ոսկիներն անգամ կը գողանանք. այդ ալ եթէ չլինի հրացաններս կը ծախենք. կառավարութիւնը անօթի մեռցնելու համար մեզ բերաւ այստեղ): Կառավարութիւնը բոլորովին անկարող է այսպիսի անկարգութիւնների առաջն առնելու. երկիրը կատարեալ անիշխանական դրութեան է մատնուած. զօրաւորը տկարի կեանքի, պատւի, ինչքի բացարձակ սեփականատէրն է: Ժողովուրդը այսպիսի անելանելի վիճակի մէջ մնացած չը գիտէ, թէ ինչ անէ:

Երկու տարիէ ի վեր կառավարութեան և մի քանի յայտնի թիւրք աղաների մասնաւոր կարգադրութեամբ այգիների և պարտէզների համար տասը զինեալ տեղացի թիւրքեր պահապան էին դրուած, որոնց ամսաթոշակները կը վճարուէին ժողովրդի կողմէ: Ասոնք պարզապէս փորձանքներ եղան հայոց այգիների և պարտէզների համար. մասնաւոր նպատակով գիշերները կամայայցնեն, կը փճացնեն բոլոր ծառերն ու տունկերը: Բոլոր գիւղացիները ձանձրացած են այդ պահապաններէն և սաստիկ գրգռուած անոնց արարքների դէմ:

Մի ժամանակէ ի վեր Պէյլանի շուրջը չէրբէղ աւազակների խմբեր են երևան եկած, որոնք կառավարութեան անհոգ ընթացքէն քաջալերուած կը կողոպտեն, կաւարեն ճանապարհների վրայ և շրջակայ հայ գիւղերը: Անցեալները մի քանի հայ գիւղացիներ քաջաբէն կը վերադառնային իրենց գիւղերը. չէրբէղ աւազակները կտրելով անոնց առաջքը կուզեն կողոպտել և կամ սպաննել. հայերը ճարպիկութեամբ խոյս տալով կազատուին և ուղիղ կառավարութեան դիմելով կը հաղորդեն եղելութիւնը: Սակայն ո՞վ պէտք

է լսէ հայերի լացն ու ողբը. թիւրք պաշտօնեան, որը իր զորեկէի գոյութիւնը միայն մեր թշուառութեան և արցունքի մէջ կը գտնէ...

ՆՈՒԷՐ.

ՆԱՄԱԿ 4. ՊՕԼՍԻՅ.

5 Նոյեմբեր 1897.

Յունաստանի պատերազմները հասան Կ. Պօլիս և այժմ համարեա թէ ամեն օր ժողովներ տեղի կունենայ Տօլմա-Բախձէի Սէրայի մէջ՝ ի ներկայութեան Թէվֆիկ փաշայի՝ հաշտութեան պայմանների վերջաւորութեան և գործադրութեան համար: Սուլթանը կը ջանայ նորանոր դժուարութիւններ առաջացնել անոնց շուտափոյթ գործունէութեան առաջ: Արեւիկն օրերս մայրաքաղաքիս իսլամ հասարակութեան մոլեռանդութիւնը սաստիկ գրգռուած է Արէսէի թիւրքերի կողմէ սուլթանին ուղարկուած բողոքագրերի պատճառով, իբր թէ վերջիններս Արէսացի ապստամբների հարստահարութեան և անգթութեան ենթարկուած են: Տեղիս թիւրք ժողովուրդը նոյնքան կատաղած է նաև Անգլիական կառավարութեան դէմ, որը իբր թէ վերջերս թշնամական վերաբերութիւն է ցոյց տուած Վիպրոսի իսլամ ազգաբնակչութեան և անոնց ղէնքերը յանկարծակի և բռնի կերպով հաւաքած է:

Հրապարակի մէջ տարաձայնուած է, թէ սուլթանը ինք է ուղարկել ապստամբ աֆրիսիների ղէնքերը և անոնց ապստամբութեան հրաւիրել: Այս շաբաթ մեծաքանակ ղէնք և ռազմամքերը գողտի կերպով Սամսոնի նաւահանգիստը ցամաք հանուեցան Երզնկայի բանակին և ուրիշ վայրեր ուղարկուելու համար. նոյնպէս և մի մասնաւոր շոգենաւով Գերմանիայէն Պօլիս բերուեցան 2,000-է աւելի մազերեան հրացան և ամբողջապէս, սուլթանի հրամանի համաձայն, յանձնուելով նորեկ զինւորների՝ փոխադրուեցան Սելանիկ:

Պատրիսը Օրմանեանը պահանջեց տեղս գտնուող հայերէն, որոնք նախապէս անիրաւի բանտ էին ձգուած և յետոյ ազատ թողուած, որ իւրաքանչիւրը ներկայացնէ մի երաշխաւոր հաստատելու իր հաւատարմութիւնը: Ով կարող եղաւ ցոյց տալ մի երաշխաւոր նա իրաւունք ստացաւ այստեղ մնալ և շարունակել իր ըզբաղումը, իսկ հարիւրաւորներ ևս, այդ անել անկարող լինելով, բռնութեան և տանջանքների տակ ուստիկանութեան միջոցով քստորուեցան իրենց ծննդավայրերը: Այս օրեր լուրեր կը շրջեն թէ Օրմանեանը հայ յեղափոխականների կողմէ սպառնական մի յայտարարութիւն ընդունած լինելով, մտադիր է հրաժարական տալ: Այս առթով թիւրքական թերթերը գրեցին և միաժամանակ քաջալերեցին Օրմանեանին: Ուղարկութիւն չը դարձնել յեղափոխականների ըսպառնալքներին և ապաւինելով իր վեհապետին, որը խոստացած է իրեն անձը պահպանել շրջակայի զինեալների՝ վստահ կերպով շարունակել իր պաշտօնը:

Նախորդ շաբաթ մեծ թւով հայեր մի շոգենաւով Ալանայէն ուղևորուած էին Պօլիս վերադառնալու համար: Գաղթականների մէջ կը գտնուէին նաև աղփիկներ, կիներ, փոքր երեխաներ՝ անպատմելի թրջ-

ուսումնական մեջ: Սուլթանի կառավարութիւնը առանց ուշադրութեան առնելու այդ ճամբորդների արգահատելի վիճակը, անպատկառ կերպով շոգենաւէն դուրս առաւ անոնց մէջէն կորովի երիտ սարգսները և առաջնորդեց ուղղակի բանդ. մնացած թշուառ կիներն ու երեխաները կրկին յետ դարձուց դէպի Վառնա: Իբր թէ Օրմանեանը իր բարեխնամ հօր՝ սուլթան Համիդին շատ է աղաչել այդ գաղթականների առանց խորութեան ներս ընդունելու մասին, բայց սուլթանը խիստ կերպով մերժեց է Ահա այն Օրմանեանը, որը մի քանի ամիս առաջ թէ քարոզներով և թէ շրջաբերականներով յորդոր կը կարգար և կը խաբէր ամբողջ հայութեան, թէ քիչ ժամանակէն բարենորոգումներ պիտի գործադրուին... Արդէն անցան շատ ամիսներ, աղետալի ձմեռը վրայ հասաւ, ամբողջ գաւառներ հայ ժողովուրդը քաղցած, մերկ, չքաւոր և տակաւին Օրմանեանի օգոստափառ և ամենաողորմած սուլթանը պիտի գործադրէ իր չոր խոտորումները...

ԱՍՏԱՌ.

ՆԱՄԱԿ ԲԵՅՐՈՒԹԻՑ

23 սեպ. 1897.

Ղարեթե երէք շաբաթ առաջ քաղաքը ալեկոծուած դրութեան մէջ կը գտնուէր: Ամբողջ քաղաքը տարածուած էր ահն ու սարսափը:

Կառավարութեան անհոգ ընթացքին պատճառով թիւրք խուժանը քաջալերուած և զինուած ազատ թափորներ էր կազմած քաղաքի շուկաներն ու փողոցները՝ այն դիտաւորութեամբ, թէ պէտք է կոտորէ առանց խորութեան քրիստոնեայ ազգաբնակիւթիւնը:

Մինչ այսպէս մի կողմէ վայրագ խուժանը իր թոյնը թափելու կը պատրաստուէր, միւս կողմէն ևս քրիստոնեաները շփոթուած և յուսահատուած՝ կըսպասէին իրենց ճակատագրական ելքին, այդ ժամանակ հեռուէն երեցաւ Ֆրանսական մարտանաւը և անսպասելի կերպով ամբողջ դրութիւնը փոփոխուեցաւ: Մարտանաւը մի քանի օրէ ի վեր կանգնած է ծովեզերքը և ատոր շնորհով առերես խաղաղութիւնը կը տիրէ և քրիստոնեայ ժողովուրդները կարող են եղած շունչ քաշել:

Անցորդների նկատմամբ կառավարութեան ձեռք առած միջոցները շատ խիստ են, մանաւանդ այս վերջին օրեր կառավարութեան մասնաւոր հրահանգների համաձայն: Երկու օր առաջ Ֆրանսական Մէսափրոի մի շոգենաւով Ալէքսանդրիայէն Բէյրութ դուրս գալու համար եկած էին 12 ճանապարհորդներ՝ յոյն, թիւրք, արաբ ևն, որոնք ունէին կանոնաւոր անցագրեր: Կառավարութիւնը նախապէս մերժեց ատոնց ներս ընդունելը և պահանջեց նոյն այդ շոգենաւով յետ վերադառնալը: Սակայն երկու ժամ յետոյ Ֆրանսական շոգենաւի խիստ դիմումների շնորհով կառավարութիւնը զիջանեցաւ և թոյլ տաւ ներս անցնեն ճանապարհորդները:

ՔԱԳԻՐ.

ՀՆԶԱԿԵԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԻՒՆԸ

ԵՒ

ՆԱԶԸՍԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ*)

(Նւէր համոզմունքի ընկերներին)

(Շարունակութիւն եւ վերջ)

Մի նշանակելի հանգամանք շատ նպաստում էր Նազըմին. դա այն էր, որ հայկական մանուկ յեղափոխութիւնը, բնական կերպով, տակաւին չունենալով հարկաւոր թւով փորձած և յեղ. կարեւոր ընդունակութիւններով օժտւած գործիչներ, երեւան էին եկել խակ, անփորձ, պարզ, լոկ ազգասիրական տենդով ոգևորւած և դեռ չը զտւած անհատներ, որոնք իրանց անփորձութեամբը պարարտ հող էին Նազըմների համար: Այդ երեւոյթը իսկապէս այլ կերպ չէր կարող լինել: «Հնչակը» իր դրօշակը պարզածին պէս նրա շուրջը հաւաքւեցան անցեալում զանազան աւանդութիւններ ունեցող մարդիկ՝ պահպանողական, առաջադէմ, միապետական կամ հանրապետական ևն, որոնք ցանկանում էին, այսպէս կամ այնպէս, ազգի ազատութիւնը: «Հնչակի» շուրջն աւելի ուշ կազմակերպութեան, համոզմունքի սեփական չօլոյ, և այդ էլ ինչպէս բնական էր, միմիայն մտաւորապէս ու հոգեպէս ընտրեալներից կազմւած: Իսկ յեղափոխական կեանքը, նոր սկսած, քիչ էր տեսլ փորձած, ընդունակ, պաղարիւն և բարոյական ոյժ կրող զաւակներ: Ի հարկէ խմբակցութիւնը չէր կարող ունենալ այն անխղիչ ներքին կապը, որ յատուկ է համոզմունքի և փորձած անհատների ընկերակցութեանը: Չը համոզւած և չը փորձած անհատը, ինչպէս թեթեւաշոգութիւններից ոգևորութեան ծայրայեղութեան է հասնում, նոյնպէս ձախող դէպքերում ընկճւում է և յուսահատութեան մատնւում: Ահա այսպէս անհաւրին չէր Նազըմներին՝ իր գործակալների միջոցով պղտորել այդպիսիների մտքերը և պառակտում առաջացնել ամբողջ յեղ. կազմակերպութեան շարքերում: Եւ ահա Նազըմի ներշնչումներից, նրա ծրագրով և մասնաւոր խորհրդով ու կարգադրութեամբ հետզհետէ սկսեցին առաջ գալ ներքին ինտրիգներ, գոտութիւններ և դաւեր՝ ուղղւած «Հնչակի» դաւանանքի, յեղափոխական գործի և Հնչակեան զօրաւոր իդուսակցութեան դէմ, որը իր լուրջ, շրջահայեաց և պատմական գործունէութեամբ մահու սարսափ է եղել սուլթան Համիդին և իր կառավարութեան և խորը կերպով քայքայել նրա ոտքերի տակ կորստի անդունդը: Այս գոտութիւնների, զրպարտութիւնների և դաւերի հետեանք՝ մենք ազգի փրկութիւնը կը պահանջենք, մենք համոզմունքի խնդիր չենք ծանչնար, պոռում էին մեր տառակահայ եղբայրներից շատեր: Այսպէս, սուլթանական և նազըմական ջանքերի շնորհով, ամեն տեսակ զրպարտութիւնների, խաղեր, դաւադրութիւնների սկսեցին մղւել «Հնչակի» կեդրոնի և մասնաւորապէս իդուսակցութեան հիմնադիրների դէմ: Ահա հրապարակ նետուեց, թագնւած նախշուն գունաւոր վարագործների ետին, Նազըմի առաջին ամենամտերիմ, ամենահաւատարիմ ծառան՝ նշանաւոր Արփիար Արփիարեանը, և սկսեց հակահնչակեան կամ հակայեղափոխական դաւա-

*) Յետ «Հնչակ» նախորդ համար.

գրութիւններն ու ագիտացիան: Բիւշ յետոյ, անաջող դուրս եկած իր թաքուն ինդրիզներէ տակից, սուլթանական վատահամբաւ վարձկան լրտեսը, Արփիարեանը, իր մի շարք գոտալիք, շահախնդիր և դաւաճան համախոհներով միասին, փորձեց ընդհանուր պառակտում գցել Կուսակցութեան ընդարձակ կողմակերպութեան մէջ և յուսահատութեան ոգին ու շարունակ արծարծել հայ հասարակութեան մէջ: Մի շարք անմեղ միամիտներ խաբւեցին Արփիարեանի և նրա ընկերների դաւա- գրութիւններով: Եւ Ալֆարական-արփիարական խօս- քը եղաւ մի անուն, որը հայկական յեղափոխական պատմութեան մէջ գրաւեց մի սեւ, ստոր ու դատա- պարտած տեղ:

Նազիմը և սուլթանի կառավարութիւնը այնքան առաջացան այդ գործի մէջ և հասան մինչև այն աստիճանին, որ ճարպիկ քաղաքականութեամբ ու հը- նարքներով Արփիար Արփիարեանի միջոցով կամեցան կազմալուծել Հնչակեան Կուսակցութիւնը և նրա տեղ հաստատել նոյն անունով, Նազիմական-արփիարական մի կուսակցութիւն, որի ծրագիրը Արփիարեանների անդարդացած ու փչացած խելքի արդիւնքն լինէր, որի ղեկավարութիւնը ստանձնած լինէր Նազիմի գործա- կատար առաքելը, որի գործունէութեան հրահանգ- ները պէտք էր տրուէին նոյն իսկ Եւլաղ-Քեօշկից՝ սուլթանից... Ինչպիսի տխուր, զղելի պատմական աչ- քակապութիւն...

Այդ է Ալֆարականութեան խմբակը, որի օրգա- նական մասը կազմում է թիւրքաց կառավարութեան և Նազիմի հանձարը, որով սուլթանը ձգտում է ո- չնչացնել հայկական դատը, հակառակ հայ ժողովրդի կամքին ու ձգտումներին: Նշանակելի է նաև այն, թէ Նազիմիստ-Ալֆարա-արփիարական խմբակը մէկ այն- պիսի ժամանակում գոյութիւն առաւ, երբ Մայր- Երկրում արիւն էր հոսում և մեծամեծ ջանքերի և օգնութիւնների էր կարօտում, որոնց փոխարէն նշանք տւին պառակտում, յուսահատութիւն և անգամալու- ծեցին յեղափոխական գործունէութիւնը:

Նազիմի հիտ միասին Արփիարեանը հաւատար- մութեամբ կատարեցին իրանց տիրոջ՝ սուլթանի կամ- քը: Նազիմի կեանքը ապահովագրեց Պօլսից հեռա- նալով և իբրև վարձագրութիւն ստացաւ չքանչա- ներ, փաշայութեան աստիճանը և վալիութեան պաշ- տօնը:

Այս տխուր դէպքերը թող որ և է վհատութիւն չառաջացնեն հայ ժողովրդի մէջ: Այդօրինակ դէպքեր անխուսափելի են յեղափոխական կեանքի մէջ և առ- հասարակ դրանք տեղի են ունեցել այն ամեն ժո- ղովուրդների մէջ, որոնք գտնւել են և անցել այն պատմական խախտու, դառն ու ձախորդ շրջանում, ուր գտնւում է և անցնում այժմ հայ ժողովուրդը: Այդ դառն փորձառութիւնների բովոյ կը հասունացնեն ժողովրդին: Իսկ Նազիմական և Արփիարական տխուր դաւերը, թշնամական տգեղ գործերը ոչ մի ազդե- ցութիւն չեն կարող ունենալ Հնչակեան Կուսակցու- թեան վրայ, որը հաստատւած է գաղափարի, համոզ- մունքի հաստատուն հիմունքների վրայ:

Յաղթանակը ճշմարտութեանն է:

Nord.

Զ Ե Զ Ե Կ

Աւրօպական լրագիրները հաղորդում են. — Զէյ- թունի քաջ լեռնականները, որոնց հերոսական պաշտպա- նութիւնը՝ իրանց հայրենի երկրի համար՝ շարժեց Եւրօպայի համակրութիւնը և Դեսպանների միջամտու- թիւնը սրանից երկու տարի առաջ, այժմ գտնւում են ընթացիկ լինելու երկրորդ մէջ: Կ. Պօլսի իշխա- նութեան մասնաւոր հրամանով բազմաթիւ թիւրք, քիւրդ, և չերքէզ գիւղացիներ պաշարած են Զէյ- թունի շրջը՝ արգելելու համար լեռնականների յարա- բերութիւնը արտաքին աշխարհի հետ: Հաւանական է շուտով տեղի ունենայ մի ընդհարում, որովհետև Զէյ- թունցիները բերէք չի մեռնիլ առանց մարտնչելու: Անգ- լիան և Ֆրանսան մտադիր են ընդդիմանալու սուլթա- նի քաղաքականութեան, որի ցանկութիւնն է սոված թողնել այս արի ցեղին, և պիտի պահանջեն Զէյթունի մէջ մի-մի Կօնսիւլ նշանակելու և բաց անելու յա- րաբերութեան միջոցները ծովից մինչև Չորի մուտքը:

ՅՈՒՆԱՍՏԱՆ, ԿՐԵՏԷ ԵՒ ԹԻՒՐԿԻԱ.

Կրէտէում իրերի դրութիւնը մնում է խառնակ, տարտամ մի ընթացքի մէջ և ժողովրդի վիճակը օ- րէցօր վատթարանում: Գանտիայի քրիստոնեաները հեռագրած են կղզու եւրօպական ազմիրալներին և հիւպատոսներին, թէ քրիստոնեաների տուններն ան- վերջ կերպով կողոպտւում են և նոցա սեփականու- թիւնները մահաբաւական աւազակների կողմից աւարի տրւում: Քրիստոնեայ ազգաբնակչութիւնը թախանձանքով պետութիւնների օգնութիւնն է խնդրում՝ պահպա- նելու իրանց գոյքերն ու ստացւածքը:

Խաշակաւ գարաբինների պահակը Գանտիայի մօ- տերը հանգիպում է մի քանի կասկածելի մահա- դականների և նրանց հետ մի ընդհարում է տեղի ունենում: Գարաբիններից մին ծանրապէս վիրաւորւեց, իսկ մահաբաւականներից մին մահացու վէրք ստացաւ և մէկ ուրիշը ձերբակալեց:

Պետութիւններն իրանց մէջ համաձայնել են Կրէ- տէի գլխաւոր կառավարիչ նշանակել Կօլօնէլ Շէյ- ֆէրը, որի կինը հայ է և ինքը անգլիացի: Սակայն սուլթանը հակառակն է պնդում, թէ Կղզու կառավա- րիչը պէտք է լինի օսմանեան հպատակ մի քրիստոնե- ալ: Պատմաբան Պօլսից է այս խնդրի մասին, թէ Կղզու ինքնավարութեան վարչական Մարմինը պէտք է կազմակերպւի պետութիւնների կողմից և ոչ թէ սուլ- թանի:

Գանտիայի թիւրքական ժանդարմիան կազմած լինելով բաշիբօզուգների ստոր դասակարգի մարդկան- ցից, որոնք խրախուսում են մահաբաւականներին աւարա- րութեան մէջ և յետոյ նրանցից բաժին ընդունում:

Հալէպի Վալիից ստացւած տեղեկութիւնների հա- մաձայն Գուռը տրտուիչ յայտնեց Ամբիկայի Կ. Պօլ- սի Դեսպանին՝ միսիօնարների ուղեւորութեան նկատմամբ այդ նահանգի մէջ: Վալին ասում է, թէ կարող է չարիք առաջ գալ միսիօնարներից, իսկ Դեսպանը հա- կառակը՝ պնդեց պատասխանելով, թէ նրանց այդ կող- մերը պոյոյտ անելուց միայն բարիք առաջ կը գայ և թէ ո և է պատճառ չի կայ նրանցից չարիք սպասե- լու:

Բ. ԳՈՒՆՐ վարձատրութեան որոշումներ տւեց այն թիւրք յեղափոխականների համար, որոնք կառավարութեան հետ խաղաղութիւն կնքեցին: Բայց ու է որոշում տակաւին չէ տրւած Մուրադ բէյի մասին, որը Անատոլի-Հիսարում իր տնից դուրս չէ գալիս:

Մերսինում աւստրիական լւոյդ ընկերութեան գործակատարը՝ Հեօր-Բըրազաֆօլի տեղական կառավարութեան կողմից ամսիս սկիզբները ամբաստանեց, իբր թէ նա այդտեղ քաղաքական ինտրիգներ է լարում: Թիւրք կառավարութիւնը բռնի ստիպեց նրան դուրս գալ թիւրքական հողից և նրան յանձնեց Ալէքսանդրիա մեկնող մի նաւին: Գործակատարը Ալէքսանդրիայի աւստրիական հիւպատոսից ստացած տեղեկութեան համաձայն վերադարձաւ Մէրսին, բայց ցամաք դուրս գալով նա անմիջապէս ձերբակալեց կառավարութեան ներկայացուցչի կողմից, որը միաժամանակ յայտնեց, թէ ինքը մասնաւոր հրամանի համաձայն է գործում: Կ. Պօլսի աւստրիական դեսպանը խիստ կերպով դիտողութիւն արււ և պահանջեց այդ խնդրի քննութիւնը մէկ առանձին պատգամաւորութեան միջոցով, որի մէջ պէտք է մասնակցութիւն ունենայ նաև դեսպանատունը: ԳՈՒՆՐ, իր սովորութեան համեմատ, նախ պատրաստականութիւն ցոյց տւեց, բայց յետոյ այդ չը գործադրեց: Այս դէպքերէ վերջ, աւստրիական լէօպօլդ անուն մարտանաւը ուղևորեց Մերսին հիւպատոսարանն ու աւստրիական շահերը պաշտպանելու համար:

Աւստրիական դեսպանը յայտարարեց Բ. դրան, որ եթէ մինչև 16 նոյեմբերի, ժամ 12-ին վերջնական բաւարարութիւն չը տրւէ իր կառավարութեան, ինքը պարտաւորուած է ձգել Պօլսը և միաժամանակ թընդանօթածգութիւն պիտի սկսէ Մերսինի վրայ, ուր արդէն կանգնած էին երկու աւստրիական մարտանաւ: Որոշուած օրը, հինգշաբթի, սուլթանը համաձայնեց լիովին բաւականութիւն տալ բարօն Գալէսի պահանջներին. — Պաշտօնականութիւն՝ Ատանայի վալիի և Մերսինի կառավարչի, ողջունել աւստրիական զրօշը. փոխարինութիւն գործակատարի վնասներին և վճարումն 250,000 ոսկու Արևելեան երկաթուղային պարտքերի հաշին:

Ուստական Կ. Պօլսի դեսպանը յայտնեց Գրան, թէ Յունաստանից ստացւած, իբրև պատերազմական տուգանք, բոլոր գույքերը պէտք է ամբողջութեամբ յանձնեն ուստ կառավարութեան իր թիւրքիայի՝ ուստ. թիւրքական պատերազմի պարտքերի փոխարէն:

Թիւրքիայի ելեմտական նախարարը համաձայնութիւն կայացրեց կառավարութեան և Բանկ-Օտտօմանի մէջ 800,000 ոսկու փոխառութեան համար՝ երաշխաւորութեամբ Յունաստանից ստացւելի պատերազմական տուգանքի: Այդ փողմարի մէկ-չորրորդը պէտք է վճարել անմիջապէս:

Սուլթանական մի իրատէ հրամայում է, որ րէզիֆներէ հարկերից յիսունը զեռեղեն չալէբի նահանգում և կենտրոնացւեն Ալէքսանդրէտում նրանցից փոստերապէս քսան և հինգ հազար: Զօրոյց է շրջում, թէ դրանք նախապատրաստութիւններ են հայերին կոտորելու յիփպոլում, Բիթլիսում և ուրիշ կողմերում: Նման բանն են հաստատում կօնսուլներն կողմից հաղորդած տեղեկութիւնները:

Մուշի հայերի վիճակը խիստ արգահատելի է: Նրանք սաստիկ հարստահարուած են հարկահաւաքներ-

րից: Գիւղացիները ստիպւած են իրանց ունեցածը վաճառել այդ պահանջներին գոհացնելու համար: Հարկահաւաքներն ուշադրութիւն չեն դարձնում օրէնքի տրամադրութիւններին և դրամը գանձում են գիւղացիներից առանց նրանց տալու օրինաւոր ստացադրեր: Վանում և շրջականերում այժմ կոտորածներ ուրիշ եղանակներով են իգործ դրւում: Հայ սեփականատէրերը սպանւում են և կամ կողոպտւում քիւրդերի կողմից և վերջիններս բացարձակ կերպով պաշտպանւում են կառավարութիւնից:

Վալիի և Բաբերդի գայմագամները ամենախիստ միջոցներ են գործադրում տասն և երեք տարւայ անվճար տուրքերի հաւաքման համար: Բանտերը խռնել են տուրք չը վճարողներով. պահանջում է նոյնպէս սպանւածների, մեռածների և գաղթածների տուրքերը: Տասանորդները բռնի վաճառւում են հոստարակութեան և նրանց գները նշանակւում կառավարութեան կողմից քմահաճ կերպով:

Վիարբէքիից հաղորդում են, թէ Տիգրիսի ձորամէջում գտնւած Հօմադ արաքները յարձակել են մի քառորդ ժամ հեռի Գարաբաշ գիւղի վրայ և բազմաթիւ ուղտեր և արջառներ քշել տարել են: Մասնակի ապանութիւններ ընդ միշտ անպակաս են:

Ալբանիայի չորս վիլայէթների ազգաբնակչութիւնը զէնք է բարձրացրել թիւրք կառավարութեան դէմ: Ապստամբական շարժումները գնալով տարածւում են նաև հարաւային Ալբանիայում: Կարծւում է, թէ կարճ ժամանակի ընթացքում ապստամբների թիւը պիտի հասնի 200,000-ի: Մինչև այժմ միայն մահմետական տարրն էր, որ զէնք էր բարձրացրել. իսկ արդէն այժմ քրիստոնեայ բնակիչներն ևս սկսում են հետեւել միւսներին: Թիւրքական բանակը անկարող է գտնւում առաջ գնալու՝ ձմեռայ սաստկութեան պատճառով: Խաալիայում գտնւող ալբանիացիները ևս հետզհետէ մեկնում են իրանց մայր երկիրը — Ալբանիայ:

Վանէա. 8 դեկտեմ. — Ապստամբները յարձակում գործեցին Բիսամօ.ի բերդի վրայ, թիւրքական զինւորները ընդգիմացան, կռիւը տևեց ամբողջ մի ժամ: Ապստամբները փորձեցին յափշտակել թիւրքերի նախիրները, բայց նոքա անաջող յետ մղեցան: Հազար ապստամբներ պաշարեցին Պէռիփօլակի գիւղը՝ մի սպաննութեան վրէժը լուծելու համար: Կռիւը եղաւ խիստ արիւնալի, որի արդիւնքը տակաւին անորոշ է:

ԼՈՅՍ ՏԵՍՍԻ

Ժ Ր Ա Գ Ի Ր

ՀՆՁԱԿԵԱՆ ԿՈՒՍԱԿՅՈՒԹԵԱՆ

ԵՐՐՈՐԴ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ

ՅԱՌԵԼԻԱԾ՝ ԲԱՅԱԴՐԱԿԱՆ ՅՕԴՈՒՄՈՆԵՐ.

ԳԻՆԸ 1 ՓՐԱՆԿ.

Յօգուածներ, թղթակցութիւններ, տեղեկութիւններ և դրամ ու մանդատ ուղարկել հետեւեալ հասցեով. — M. Beniard. — 22, Ormiston Road, Shepherd's Bush. London W. [Angleterre].

ՏՊԱՐԱՆ

„ՀՆՁԱԿ“-Ի

1 ՕՆԴՕՆ